



# Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend  
Houssig Nishanian  
Pastor  
Telephone (416) 759-6958

Toronto 13... Ապրիլ... 198...

Կերաշնորհ  
Տէր Թորգոմ Ս. Արք. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ  
Նիւ Եօրք.

Սրբազան Հայր,

Կամքէ անկախ պատճառներով, տարեկան անդամական ժողովի ատենագրութիւնները եւ պահանջուած միւս տեղեկութիւնները աւելի կանուխ դրկել կարելի չեղաւ: Այս ուղղութեամբ Ձերդ Սրբազնութեան ներողատուութիւնը կը խնդրենք:


Անդամական ժողովի, քուէի առաւելութեամբ, ծխական Խորհուրդի ընտրուած անձերու անունները Ձերդ Սրբազնութեան վաւերացման կը ներկայացնեմ:

Պր. Լեւոն Չէօմլէքճիեան	121 քուէ
Պր. Ղեւոնդ Շահմելիքեան	117 " "
Տկ. Շաքէ Շահնազար	114 " "
Պր. Մինաս Հաճէթօղլու	112 " "

Ներփակ կը դրկեմ տեղեկատուութիւններու գրքոյկը, ատենագրութիւնները, քուէի թուղթի օրինակ մը եւ յաւելեալ տեղեկութիւնները:

Ս. Զատկուայ առթիւ ընդունեցէք ծխական Խորհուրդի անդամներուն եւ իմ լաւագոյն բարեմախղութիւնները:

Որդիական ակնածանօք  
Մատչիմ Ի Կամբոյր Ս. Աջոյդ

  
Յուսիկ Բինյ. Նշանեան